

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՈՆ.

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Père G. Kaléckien Mechitaristengasse 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » » 4 հոգանակայ 6 ֆր.
Արասանակահի համար (Երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14 ֆր. 4 հոգանակայ 7 ֆր.
ԿԱՆԽԻՒՆ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եռայնը դրկիյն հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՑ. — Վ.Ա.Ն.Ա. (Պուլկարիա)

Редакция на вѣст.

Rédaction du journal

„Иравункъ“

„Iravounk“

ВАРНА (България).

VARNA (Bulgaria)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս լին յիշուիր եւ յարմար դաստաւ-
ները միայն կը հրատարակուին աւ-
անդրովին կամ մասամբ.
Ծանուցանալ տղը 20 սանթիմ. երե-
ֆին աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի.

ԱՌԱՋԱՐԿ ՍԸ

Այն անգամ որ Պուլկարիոյ
Ազգ. վարժարաններու նկատմամբ
լրացիւններուն մէջ կարգադրած եւ
թեր ու դէմ յօդուածներ, որոնք
գրելով եւ ամբողջովին կը յանդի-
ստ եղբակցութեան թէ «մինչեւ
հիմա կարելի եղած չէ հաստատ
կողմնի մը վրայ դնել Ազգ.
վարժարաններու կանոնաւոր յա-
րատեալութեան գործը», խորհած
եւ որ ինչո՞ւ Պուլկարիոյ հա-
տարակութիւնը լրջօրէն ձեռք
չառնէր իր գոյութեան համար
այնքան կարեւոր այս խնդիրը եւ
չուսումնասիրէր զայն, պահան-
ջուած խնամքով, միանգամ ընդ
միջոց ապահովելու համար իր
կրթական վիճակը, իր միջոցնե-
րուն ներած սահմանին մէջ:

Եւ կը կարծեմ թէ շատ զիւ-
րին ու մանաւանդ շատ գործնա-
կան միջոց մը կայ՝ որուն գոր-
ծադրութիւնը երկրին օրինական
ոչ մէկ տրամադրութեան կը հա-
կառուի: Պարզիկէ առաջ այս
միջոցը՝ օգտակար կը համարիմ
բանի մը բացատրութիւններ տալ,
խնդիրն աւելի լուսարանելու հա-
մար:

Տարրական ճշմարտութիւն մըն
է որ մեր եկեղեցիները՝ մեր հո-
գեկան պէտքերը լրացնելով հան-
դերձ՝ կը հայթայթեն մեզի կա-
րեւորագոյն մասը այն հասոյթ-
ներուն, որոնք կապահովեն Ազգ.
վարժարաններու պիտանքն. թէ
կալուածները, որոնք կը հայթայթ-
են հասոյթի միւս կարեւորա-
գոյն մասը, արձանագրուած են
եկեղեցւոյ անունն:

Այս հասոյթներու մատակարա-
րութեան համար Պուլկարիոյ հայր
կընտրեն իրենց թաղ. խորհուրդ-
ները, թրքահայոց սահմանադրու-
թեան տրամադրութեանց համա-
ձայն: Ընտրուած մարմինը, ի
բաց քննական բերմամբ, իր
պաշտօնավարութեան ամբողջ տե-
ւողութեանը միջոցին պէտք է ի-
րաւունքը ունենայ վերին հսկողը,
կառավարողն ըլլալու ոչ միայն
հասոյթներուն՝ այլ նաեւ անոնց.
մով մատակարարուող ամէն գոր-

ծի ու հաստատութեան, հետեւա-
բար եւ վարժարանին:

Այս է, ու այս միայն կրնայ
ըլլալ տրամաբանական հետեւու-
թիւնը ժողովրդական քուէարկու-
թեան, սակայն այս չէ՝ իրադու-
թիւնը Պուլկարիոյ համար:
Կառավարութիւնը, իր կրթական
օրէնքով, ոչ պուլկար հաստատու-
թեանց վարժարաններուն համար
պատասխանատու կը ճանչնայ թաղ.
խորհուրդէն առկա եւ սակայն ա-
նոր պէս ժողովրդական քուէար-
կութեամբ ընտրուած ուրիշ մար-
մին մը, երեք տարուան պաշտօ-
նավարութեան շրջանով, որ կը
գտնուի ուղղակի կրթական տես-
չին իրաւասութեան ներքեւ: Տըր-
ուած պայմաններով ընտրուած
վարժարանական հոգաբարձութիւ-
նըն ալ, իրաց բնական բերմամբ,
պէտք է բացարձակ իրաւունքը
ունենայ մատակարարելու ազգ.
վարժարանը: Կրթական օրինաց
տրամադրութեան համաձայն՝ հո-
գաբարձութիւնը իրաւունք ունի
կրթական տարրի արդար բաշ-
խում մը ընել հասարակութեան
վրայ եւ անկէ գոյացած հասոյթով
մատակարարել վարժարանը:

Այս կերպով Պուլկարիոյ մեծ
առաւելութիւն մը կը ներկայացնեն
թրքահայոց վրայ, ունենալով եր-
կու անշատ մարմիններ՝ իրենց ու-
րոյն հասոյթի ազդիւրներով: Թաղ
խորհուրդին հասոյթը՝ որ կը բըզ-
խի, սահմանափակելով խնդիրը,
ժողովրդական ինքնակամ նուէրնե-
րէն, եւ հոգաբարձութեան հասոյթ-
թը, որ պէտք է բլիւի կրթական
օրինաց տրամադրութեան: Այս
նպատակաւ պայմաններու մէջ, ու
աշխատութեան բաժանումի օրէն-
քով, մեր պաշտօնական երկու
մարմինները, իրարմէ անկախ եւ
նայն իսկ իրարու հակադիր տար-
բերէ բազմաաւելով հանդերձ,
պարտաւոր էին տալ խիստ շօշա-
փելի արդիւնքներ, մին՝ եկեղեց-
ւոյ բարեգործութեան եւ միւսը՝
կրթական գործին մէջ: Եւ սակայն
ոչ մին եւ ոչ միւսը գրեթէ չեն
կրցած իրապէս օգտակար ըլլալ ի-
րենց հասարակութեան:

— Ինչո՞ւ:

— Հոս է որ ահա բուն հարցը:

Կը ներկայանայ մեզ իր որոշ գը-
ծերով, մշտաբաց վերքի մը նման,
որ շարունակ կ'արիւնի, որուն
գեղն ու դարմանը կրնանք ճանչ-
նալ, այլ չենք ուզեր ճանչնալ,
որովհետեւ չենք ուզեր գոցել այդ
վերքը. եւ ինչո՞ւ գոցենք, քանի
որ անկախ պատրաստ հող մըն է,
որուն վրայ մեծ ու պղտիկ, հա-
րուստ ու աղքատ աննշան բացա-
ռութեամբ հաճոյք կը զգան թա-
փելով իրենց տգեղ կիրքերուն
տրտադրութիւնը, զոհելով այս-
պէս դրամ եւ սերունդ:

Վերադառնալով ուրեմն խնդրոյն
պիտի ըսեմ թէ մեր չորհաբար-
ձութեան դատապարտելի անհո-
գութիւնը, երեւմն ալ հասարա-
կութեան յոռի կամեցողութիւնը
արդիւք կըլլան օրինական տու-
քերու կանոնաւոր զանձումին, ու
հոգաբարձութիւնը չունենալով
կամ ծուղանալով ստեղծել հասոյթ-
թի ազդիւրներ, աչքը կը անկէ
եկեղեցւոյ հասոյթներուն, զորս
զանձելու համար ոչ մէկ դժուա-
րութիւն կը քաշէ թաղ. խորհուր-
դը ():

Եթէ օրուան թաղ. խորհուրդը
նախապաշարուած մարմին մը չէ
ու պատրաստ է, իսէր համեմաշ-
խութեան, հասոյթներու վրայ ու-
նեցած իր իրաւունքներէն մեծ
մաս մը զոհելու հոգաբարձու-
թեան, այս վերջոյն խնայելու
համար... աւելորդ յոգնութիւն
ներ, այն ատեն ամէն բան ի կար-
գին է: Սակայն, շատ անգամ,
թաղ. խորհուրդը եւ հոգաբարձու-
թեան անդամներ, անհատապէս,
անձնական հաշիւներ կ'ունենան
մտքերիք, այն ատեն թաղ. խոր-
հուրդը կը յիշէ որ ինք եկեղե-
ցապետական հասոյթներու աւան-
դապահ է. հոգաբարձութիւնն
ալ միւս կողմանէ կը յիշէ որ ինք
անկախ մարմին մըն է, թէ կա-
ռավարութիւնը զինքը միայն կը
ճանչնայ պաշտօնապէս, թէ ըսեր
է, ըսի, ըսաւ, եւ չեմ գիտեր
տակաւին ինչ տեսակ բացատրու-
թիւններ՝ որոնց մէջ արեւու պէս
կը փայլի «ըսեմ» բայը իր ար-
տասովոր անկանոնութեամբ: Ու
գրեւեալայեցէք որ՝ այս բարեւոն-

եան խառնակութեան մէջ, կը
գտնուին թաղականներ եւ հոգա-
բարձուներ իսկ, որոնք խնդիրը
բոլորովին տարբեր կերպով ըմբռ-
նելով, կը հրահրեն զայն շարու-
նակ, որպէսզի առիթը չունենան
իրենց իւզազնի տարեկան նուէրը
կամ իրենց կրթական տուրքը
վճարելու:

Տեսնուած են նոյն իսկ թաղ.
խորհուրդի անդամներ, որոնք հո-
գաբարձու ընտրուելով, եւ հոգա-
բարձուներ՝ որոնք թաղական
ընտրուելով մոռցած են իրենց
գիրքն ու սկզբունքները, եւ իրա-
րու դեր յափշտակելով, ամենայն
պաղարիւնութեամբ, անգիտակցա-
բար, իր պարտականութիւնը կա-
տարողի մը անխառն զօհունա-
կութեամբ իրենք զիրենք հակա-
սած են:

Որմէ կը հետեւցնեմ. «եթէ
մինչեւ հիմա կարելի եղած չէ
հաստատ կողմնի մը վրայ դնել
ազգ. վարժարաններու կանոնաւոր
յարատեւութեան գործը» պատ-
ճառը, յաճախ, ոչ թէ հասոյթ-
ներու անբաւականութեան խնդի-
րն է, այլ թաղականի ու հոգա-
բարձուի միջեւ ախրող անհամե-
րաշխութիւնը, իմա՝ անձնական
ատելութիւնները:

Անգամ մը որ ընդունինք այս
ճշմարտութիւնը, պիտի ընդու-
նինք, առանց վերապահումի, թէ
հարկ անհրաժեշտ է այս երկու
մարմինները գնել այնպիսի վիճա-
կի մը մէջ որ անկարող ըլլան փա-
սելու թէ իրենց պաշտօնին ար-
ժանապատուութեան եւ թէ իրենց
վստահուած հաստատութեանց:

Իմ մասին, տարօրինակ հակա-
սութիւն մը կը գտնեմ Պուլկարի-
ոյ ընտրական գործադրութեան
եղանակին մէջ: Ինչ նշանակու-
թիւն ունի եկեղեցւոյ մատակա-
րարութիւնը յանձնել թրքահա-
յոց սահմանադրութեան տրամա-
դրութեանց համաձայն ընտրուած
թաղ. խորհուրդի մը, որուն նոյն
այդ սահմանադրութիւնը ազգ.
վարժարանին վերին հսկողութեան
իրաւունքն ալ կուտայ, եւ միեւնոյն
ժամանակ յանձնել վարժարանը
Պուլկարի սահմանադրութեան տը-
րամադրութեանց համեմատ ընտ-

սրտագին չնորձալ ալու թիւն մը յայտ-
նել եւ իրենց այս ազնիւ ձգտումները
քաջալերել մեր ամենուս պարտակա-
նութիւնն է :

Նոյն անձնութիւնը կը տես-
նուէր նաեւ Ազն. Օր. Բ. Մալեանի
կողմանէ որ դադարներու միջոցին ան-
դադար կը նուազէր զաշխարհի վրայ
ընտիր քաղաքներ իր ծանօթ յաջողու-
թեամբ սրով ներկայացման փայլը կը
աւելցնէր :

Գնահատելի է յոյժ նաեւ Երկսեւ
վարժարանաց Պատ. Հոգաբարձութեան
գործունէութիւնը, որ ամեն ջան ի
դարձ կը զնէր հանդիսի չքեղութեան
եւ կարգապահութեան համար, բարի
գործ մը տեսած եւ իրենց առ ազգի
ունեցած պարտականութիւնը կատա-
րած ըլլալու զիջակցութեամբ : Երեւ-
զակցութիւնն է չնորձալ ալու թիւնն :

Գ.

ՇՓՈՒԹ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւնն նախորդ քիւնէն)

Բ.

ԹԻՒՐԿԻԱ Եւ ՄԱԿԵԴՈՆԻԱ

Ինչ որ կուզենք Մակեդոնիոյ մեր
եղբայր համար, կ'անեն Բոլղարները,
ասորքը են անաւանիկ : Լաւ վարչու-
թիւն մը, թրքական իշխանութեանց
գործած ամենակերպ զեղծութիւնը դա-
դարուը, քաղաքակրթեալ եւ մարդա-
սիրական համարուած Եւրոպային մա-
նակցող երկրի մը մէջ ազատ ազդեցու-
թիւնը, Գալով մակեդոնական հար-
ցին՝ «որ զուտ մարդասիրական հարց
մը է, այս հարցը պէտք է զմեզ Ռու-
սիայեցւոց հետ գէշ վիճակի մէջ դնել :
Բոլղարներ, Ռուսացիներ եւ Յու-
ներ հաւասար չա՛ն մը ունին Մակե-
դոնիոյ զմարտաբան բնակչաց վիճակին
բարեփոխման համար :

«Բայց Մակեդոնիոյ բնակչաց այժմ-
եան կացութեան բարեփոխումը—այն
բարեփոխումը զոր կը մաղթէ բոլղարա-
կան իտի կարիքները բոլղար ժողովուրդ-
եան եւ, անստորակոյտ, քաղաքակրթ-
եալ աշխարհին հետ միաձայն—արդա-
րապէս կը պահանջէ կա՛մ մակեդոնա-
կան ժողովուրդեան տեղական մի շար-
ժումն, կամ այս շարժման արտասա-
նանքն ոգնութիւն մը ունենալն :
Ահա այս մարտաբանական շարժումն է,
որ կրնայ փոխուիլ քաղաքական շարժ-
ման՝ եւ որով կ'որոշուի Գալովը,
որով զմաղթելու վիճակին մէջ զբա-
նուելու համար՝ կը շարունակէ զին-
ուորական միջոցներ ձեռք առնել ի
Մակեդոնիոյ : Ահա այս շարժումն է,
որով կարծեալ էր վախճուի նոյնպէս ի
Վիէնայ՝ ի թէ պատելու լինինք վիէն-
ական թիրախներու եւ անգլիական
թիրախներու վիէնական թղթակցու-
թեանց լիզուլն : Ինչպէս նաեւ Մակե-
դոնիոյ զանազան տեղերէն գերմանա-
կան թիրախներու զրկուած այն լուրերը :»

Թուրքիան, ի վերայ այս ամենանի,
չթերանար նաեւ ուրիշ միջոցներու
զիմէ՛լ յուսարով միշտ այս կամ այլ ա-
մեն միջոցներով իւր կտրճանարար դո-
լաթիւնը ընդ երկար պահպանել «ա-
ռաջ զիմով» եւրոպային մէջ : Այսպէս
ուրեմն, սուլթանական երկրորդի «պա-
հպան ալթանագիւններու հայրենակից-
ները» բարձրագոյն «հրաւէրին» անսա-
լով՝ Իթէկի մէջ ժողով մը կը գումա-
րեն, այդ ժողովոյ ծանօթ որոշումները
բնականապէս հաճելի չէին Ռուսիոյ,
որուն Պոլսոյ զեստանը խտրու եւ լըր-
ջօրէն բողոքեց Դուան ալթանական ժո-
ղովոյն կայացուցած որոշումներուն :

Դէմ, որոնք այնքան պիտի կնճռուէ-
ին Բոլղարական թերակղզւոյն այժմեան
զանազան կացութիւնները : Եւ սակայն
ներքնապէս, Ռուսական կը համակրէր
ալթանական այսօրինակ շարժումնը...
Ի վերայ Մակեդոնիոյ ալթան քրիստո-
նէից համար ձայն բարձրացնող բալ-
կանեան տէրութեանց ունեցած ամեն
ձգտումն է, հետեւաբար, ի նպատակ
Մակեդոնիոյ մէջ բնակող իւրայնոց
«գոյութեան իրաւունք» ապագայ պաշտ-
պանութեան ինդրոյն :

Այժմ գանք որոշելու համար, թէ
որ ազգութիւնները կրնային բնական
ժառանգներ լինել այժմեան Մակեդո-
նիոյ : Ի Սօֆիոյ, անցեալ տարի, Բոլ-
ղարիոյ «Ձեռնորակեան թերթի» ինք-
նագործութեան կողմանէ՝ «Մակեդոնիոյ
հազարաւորութեան համաժողովը» ան-
ուամբ հրատարակուած մի բրօշուրը,
հեղինակութիւն Պ. Վասիլ Կընչէլի,
կը տեղեկացնէ թէ շուրջ 60,000 քա-
նակութիւն քիլոմէթր տարածութիւն ու-
նեցող Մակեդոնիան ունի մօտաւորա-
պէս 2,240,000 բնակիչ՝ ըստ յետագայ
ցուցակագրութեան :

Բոլղարներ (*)	շուրջ...	1, 100, 000
Պոմակներ,	»	115, 000
Թուրքեր,	»	520, 000
Յուներ,	»	200, 000
Ալբանացիներ	»	100, 000
Ռուսներ,	»	75, 000
Հրեաներ	»	65, 000
Գնչուներ,	»	35, 000
Ձանազաններ	»	30, 000
		2, 240, 000

Ուստի, այժմեան Մակեդոնիոյ «բը-
նական ժառանգները» կրնային համար-
ուիլ՝ Բոլղարներ, Սերբեր, Յուներ,
Պոմակներ եւ Ալբանացիներ : Ասանց-
մէ զուտ կրնային պահուիլ՝ իբրեւ ան-
բնական ժառանգներ Մակեդոնիոյ՝ չու-
նէին իրաւունք հակառակելու մակե-
դոնական ինքնավարութեան մը ապա-
գայ կազմութեան, ի նպատակ բալկան-
եան թիրախկոյ իստագրութեան, ա-
ռաքելով թէ իրենց ազգային իրա-
ւունքները անով պիտի կորուսէին ի
Մակեդոնիոյ : Եւ Ռուսիոյ, իբրեւ հա-
մարտութեան ներկայացուցիչ, որ-
քան պիտի ցանկար Մակեդոնիոյ փր-
կութիւնը տեսնել՝ այնքան եւս մի օր
պիտի ուղէր Բոլղարեան տէրութեանց
չէզոքացումը տեսնել, Ձոնցիկոյ կամ
Բելգրայի նման, ինչպիսի արդէն նո-
րումս կը հաղորդուէր այն՝ շատաբար
կուած զինավարժութեան կօնֆէրէն-
ցիային մէջ վիճելի եւ վճռելի... :
Ձի յայնժամ Բալկանեան թերակղզւոյն
խաղաղութիւնը միանգամ ընդ միշտ
ապահովուած պիտի լինէր եւ, հետե-
ւաբար, ալիւս չպիտի կրնար Եւա-
պիստութեան «ինտրիկ»ներուն մատ-
նուիլ որոնք այնքան նեղացուցիչ ե-
ղած էին եւ պիտի լինէին Ռուսիոյ
տրտաբան քաղաքականութեան համար
Բալկանեան թերակղզւոյն մէջ :

(*) Կարելի էր դիտել աստուծոյ, քի
Սերբեր ի միասին համարուած պիտի
լինէին Բոլղարներու հետ... ազգասի-
րաբար ցոյց տրուած լինելու համար
անոնց «չգոյութիւն» ի Մակեդոնիա,
քան մը որ հակառակ էր իրականու-
թեանն :

ԻՐԱՒԱՂ

Սլաւոն եւ Արամ Մարգարեան
երկու եղբայրները Ամերիկայի
Ֆրանչիսկօ քաղաքին մէջ իրենց
խանութիւնը գիտմամբ հրդեհելու
ծանր յանձնարարութեամբ անուանու-
ած զատարանի առջեւ ալ խոտովա-
նած լինելով, թիպարտութեան
դատապարտուած են, Սլաւոնը 9
տարւոյ եւ Արամ 5 տարւոյ հա-
մար : Ըստ Արմենիայի թղթակ-
ցին, զատարանեաները նպատակ
ունեցած են իրենց խանութիւնը հր-
դեհելով, ապահովագրական ըն-
կերութեանէն 4,000 տոլար պահան-
ջելու :

—Վարդանանց տօնի առթիւ
Պուլկարիոյ եւ արտասահմանի պա-
նազան քաղաքացի մէջ տեղի ու-
նեցած հանդէսները նկարագրող
թղթակցութիւններ հասած են մեզ
եւ ամենն ալ կը փափագին որ
նոյնութեամբ հրատարակենք :
Բայց լրագրիս ծաւալը չը թոյլա-
տերի մեզ անոնց փափագին գո-
հացում տալ, այլ կըստիպուինք
միայն սա բառերով քաջալերելով
իրենք.—կեցցէ՛ք, շատ լաւ էք ըրեր
ու լաւ էք խօսեր, եւ փափագելի
է որ խօսքէ եւ ցոյցերէ անդին
ձեր պարտականութիւնները ալ
լինել ու գործադրել չի մոռնաք :

—Վանայ նորընտիր Առաջ, տե-
ղապահ Տ. Ներսէս կաթիկ. Աս-
լանեանի պաշտօնը վաւերացնող
պէտքով պատրիարքարանին յանձ-
նուած լինելով, անցեալ չորեք-
շաբթի օր Պատրիարքը զանի
ուրիշ պաշտօնավարութեան հետ
միասին Ներսէս կաթիկոսին
յանձնած եւ պատուիրած է որ
շուտով ճանաչուի իրեն :

—Սօսկուա բնակող բարերար
ազգային մը այս տարեգլխէն ըս-
կեսալ Ալիթմարի Որբանոցը իր
պաշտպանութեան տակ տաւ
եւ ամսական 12 ու կէս օսմ. ոս-
կի վճարելու յանձնարար եղած է :

—Վեհ. կաթողիկոսը դեռ թիֆ-
լիս կը մնայ. օգբը նպաստաւոր
չըլլալով, ստիպուած է Հաղրուտ,
Սանահին, Գանձակ եւ Շամախի
կողմերը ընկիւք այցելութիւնները
յետաձգել :

—Գաւառները մի քանի տեղեր
բողոքական միսիօնարներ հայոց
եկեղեցւոյ մէջ քարոզութիւններ ը-
նել սկսած են, Պոլսոյ կրօն. ժո-
ղովը իր վերջին նիստին այս խըն-
դիրը քննելով, Առաջնորդներու
եւ Տեղապահներու ուղղեալ շրջա-
բերականով մը պատուիրած է
թոյլ չի տալ օտար դաւանութեանց
պատկանող կրօնաւորներու կամ
քարոզչներու մասնակցիլ մեր ե-
կեղեցական ներքին տարողու-
թեանց. ժողովը յայտարարած է
նաեւ թէ, սկիւր այս պատուէրը ան-
սաստէ եւ թոյլ տայ խիստ պա-
տասխանատուութեան պիտի են
թարկուի :

—Ռօտսթոյի Առաջնորդ Տ.
Յովսէփ վր. Ալվաղեան վանայ
սովկեց ինպաստ ըրած հանգանա-
կութեան արգիւնքը՝ 51 օսմ. ոսկի,
Պատրիարքարան զրկած է :

—Պոլսոյ խառն ժողովը վանէ
եկած հեռագրէ մը տեղեկացաւ
որ մասնաւոր պաշտօնէից միջոցաւ
կատարուած քննութենէ մը երե-
ւան եղած է թէ վանայ եւ շրջա-
կայից մէջ կ'սրտնեղց թիւը կըստ-
ուարանայ. եւ առ այժմ 12,000
մարդ կայ հացակարօտ, որ մին-
չեւ հունձքի առեւտրի առաւել 20
ական փարայի կարօտ են իրենց
օրական հացին համար : Ժողովը
տեղեկացաւ ձեռնարկութեանց եւ
խնդրեց Ս. Պատրիարքէն որ ա-
ռաջ տանի իր հոգածու-
թիւն :

—Վանայ Առաջ. Տեղապահը
հեռագրով մը իմացուցած է թէ
կրօն. Դար թաղի կաթողիկոսութեան
գիմով 126 ընտանիքներէ 115ը
կրկին Աղգ. Եկեղեցւոյ գիրկը
վերադարձած են :

—Գուրտպէլէնի կրօնափոխնե-
րը եւ կրկին ազգային դաւանու-
թիւնը վերընդունած են :

ԳԵՌՈՐԳ ԵՊԻՍԿ. ԻԽԹԻԻՃԵԱՆ

—)(—

Էվրօրատա պուլընան Էրմէնիլէ-
րէ Հոգեւոր Հովիւ նապ օլընան
Իւթիւճեան Գեր. Տ. Գէորգ եպիս-
կոպոսըն վազիֆէսի հազարնտա՝
Բաթրիգլսանէ թարաֆընտան Ս.
Էլմիածինտէն մալիւմաթ իսթէ-
նիլմիշ իտի : Բէֆիգիմիկ Արեւիք
կաղէթասընտա օգուտըղընա կէօ-
րէ, Ս. կաթողիկոս՝ պու քէրրէ
Բաթրիգլսանէյէ եազտըղը պիր
թահիրաթտա՝ Տ. Գէորգ եպիս-
կոպոսըն վազիֆէսի՝ Ասթրիա,
Ֆրանսա, ինկիլթէրա վէ Բուժա-
նիատա պուլընան Էրմէնիլէրի զի-
յարէթ իտուպ, բուհանի իտարէ-
լէրինէ նէզարէթ իթմէքսէն ի-
պարէթ օլտըղընը, վէ Պուլկարիս.
թանտա պուլընան Էրմէնիլէրին
բուհանի իտարէսի իսէ սապըղը
վէճիլէ Բաթրիգլսանէյէ այիտ օլ-
տըղընը իշար իթմիշ տիր :

—Սուի հալլէրինտէն տօլայը
Բաթրիգլսանէճէ վազիֆէսէն թա-
թիլ իտիլէն Պօթուլանտաքի Տ.
Ալմանաս նամ քահանայա մու-
մարիլէյ Իւթիւճեան Եպիսկոպոս
թարաֆընտան իտիլէնթէքտիրաթ
վէ Պօթուլանտան տիշարը չըզմա-
սը իշիւն վազը օլան թէպիլղաթ
իւզէրինէ մէրգուժ բարաս՝ մու-
մարիլէյ Եպիսկոպոսը Բուժանիա
հիւքիւմէթինէ ֆէսաւտը մազա-
մընտա կէօսթէրմիշ, վէ պուլըն
իւզէրինէ հիւքիւմէթ՝ մուժարիլէյ
Եպիսկոպոսը ալիւրէն Եւալ չէհրին-
տէ պուլընտըղը էանտէ Բուժա-
նիատան ալիւրը չըզարմըշ տըր :

Իւթիւճեան Եպիսկոպոս՝ իշպու
վազանըն զուհուրինտէն էվվէլ

